



Երևանյան բնակելի անշարժ գույքի շուկան 2009թ.-ին

Ամփոփելով 2009թ-ի Երևանյան անշարժ գույքի շուկան՝ կարող ենք ասել, որ այն անցել է բնակելի տարածքների համար առանց որևէ ցնցող զնային փոփոխությունների: 2009թ-ի ընթացքում գրանցվել է բնակարանների զնային ինչպես նվազում այնպես էլ աճ թե դրամային և թե դոլլարային:

2009թ-ի դրությամբ Երևանում 1քմ բնակելի տարածքի միջին գինը կազմել է 266,000 ՀՀ դրամ, որի ցուցանիշը 2008թ-ի համեմատ ցածր է 13%-ով: Ըստ վիճակագրական տվյալների՝ Երևանի համայնքներում 2009թ-ին 2008թ-ի համեմատությամբ 1քմ բնակելի տարածքի գների մինիմալ նվազումը գրանցվել է Կենտրոն համայնքում՝ ընդամենը 2%-ով՝ միջինում հասնելով 475,000 ՀՀ դրամի, իսկ Արաբկիր համայնքում 2009թ-ին 1քմ բնակելի տարածքի միջին գինը 2008թ-ի համեմատ նվազել է 11%-ով և գրանցվել է 360,000 ՀՀ դրամ, իսկ Նոր Նորքում 2009-ին 2008թ-ի համեմատ գրանցվել է բնակարանների զնային մաքսիմալ նվազումը՝ 15%:

Իսկ ինչ վերաբերվում է առքուվաճառքի գործարքների քանակին, այս 2009թ-ին վերջիններիս նվազում նկատվել է միայն օգոստոս և նոյեմբեր ամիսներին իսկ տարվա մնացած ամիսներին բնակամասերի նկատմամբ կատարված առքուվաճառքի գործարքների քանակը ամսական աճում էր միջինը գրեթե 16%-ով իսկ 2008թ-ին կատարված առքուվաճառքի գործարքների քանակի հետ համեմատ այդ ցուցանիշը 2009թ-ին աճել է 18%-ով:

Համայնք	2008թ. /ՀՀ դրամ/	2009թ. /ՀՀ դրամ/
Կենտրոն	483,300	471,600
Արաբկիր	403,400	358,600
Քանաքեռ-Զեյթուն	305,700	276,300
Նոր-Նորք	270,700	230,800
Շենգավիթ	277,900	241,900
Դավթաշեն	292,200	261,100
Աջափնյակ	271,800	235,900
Մալաթիա	260,500	226,400
Միջինը Երևանում	296,300	265,800

ԱՄՆ անշարժ գույքի շուկան վերականգնվում է



Միացյան Նահանգների անշարժ գույքի շուկան, որի փլուզումը ամերիկյան տնտեսության անկման և համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառ դարձավ, սկսել է վերականգնվել:

Գնաճի ամենատպալորիչ դինամիկան դրսևորվել է Մասաչուսեթս նահանգում: Մեկ տարվա ընթացքում տների գները բարձրացել են 36%-ով՝ հասնելով միջինում 1,198 մլն ԱՄՆ դոլլարի: Անշարժ գույքի գնաճի արագ տեմպեր գրանցվել են նաև Քալիֆորնիայում՝ այստեղ միջին տարեկան աճը կազմել է 28%: Նշենք որ ավելի վաղ Forbes-ը տեղեկացրել էր, որ բնաշուկայի և շինարարության տեմպերի հաջորդական անկումը 2011թ-ին կհանգեցնի ԱՄՆ գույքի շուկայի դեֆլացիայի:

Գաֆեաճեան Ընտանիք Հիմնադրամ